

Ջանք գործ զնել զարձնելու համար զայն իր աթոռը, ու իրենց կամքը առաջ տանելու համար ձեռք կը զարնէին Էջմիածնի հասոյթներուն: Շարաթ օր մը (3 Մայիս 1656) Էջմիածնի պնակը բռնելու համար Երեմիա կ'երթայ եկեղեցի ու կը տեսնէ որ հոն կը կարդացուի Եղիազար Վրդ. ի Կ. Պոլսոյ վեց եկեղեցիներուն ուղղած մէկ գիրը, որով խտալու կը պատուիրէր դադրեցընել այնուհետեւ Էջմիածնի դանձանակը, քանի որ, կ'ըսէր, ժողովուրդի տուրքն ու ողորմութիւնը փութանակ իր տեղը հասցնելու՝ կախարդներու և վհուկներու կը կերցընեն ու զինք սպաննել տալու նպատակով դաւեր կը լարեն իր դէմ: Այդ օրէն, կը գրէ Երեմիա, «ես ոչ բռնեցի զթապալսն եւ այլն նոյն պէս»:

Եղիազարեանք Մուղնեցիի և համախոհներուն չար արարքները տեղեկագրած էին նորընտիր կաթողիկոսին ու հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնէն ազդու տնօրինութեան մը կը սպասէին՝ որպէսզի վերջ մը տրուէր այդ անհաճոյ կացութեան: Յուլիս 13ին Էջմիածնի սուրհանդակը կը բերէ սպասուած պատասխանը, որուն պարունակութիւնը կը հիասթափեցնէ զիրենք: Կաթողիկոսը կը գրէր. «Քաղաքիդ բանը միշտ այդպէս է. ես լօնչ կարող եմ ընել: 'Իուք հրաման ունիք որ այսուհետեւ սեազլուիս չնստեցնէք. մի' նըստեցնէք ու առաջուան պէս թո'ղ ձեր իշխաններուն ձեռքը ըլլան եկեղեցիները, ու եթէ հաւանիք, ասկից կամ անկից՝ ո'ր մէկը որ ուզէք՝ զայն քարոզիչ կարգեմ ձեզ: Ես չեմ գիտեր ի'նչ ըսեմ. ահա՛ երեք տարիէ ի վեր ձեր մէջն էր (Մուղնեցին) ու ոեւէ խընդիր չունէիք հետը. այս երեք ամսուան մէջ լօնչ պատահեցաւ որ այսպէս եղաւ: Ծնունդէն ի վեր չորս թուղթ եկաւ ու ես չեմ գիտեր թէ ի'նչ պատասխանեմ, վասնզի այդ թուղթերը համաձայն չեն իրարու»: